ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

հեռ. 0281-2-23-80,2-29-67

գ.Գետափ N51 «09»փետրվար 2015թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Գետափ համայնքի ընդհանուր ժողովի 08.02.2015թ.

Ժողովին ներկա էին Գետափ համայնքի շուրջ 163 բնակիչներ, համայնքի ավագանին և համայնքի ղեկավարի աշխատակազմը: Ժողովը սկսեց 17.00-ին և ավարտվեց 18.00-ին: Ժողովը վարում է համայնքի ղեկավար՝ Գագիկ Ալոյանը, քարտուղարում է աշխատակազմի քարտուղար Գեղեցիկ Ասրյանը:

Օրակարգում

Համայնքի ղեկավարի 2014թ-ի կատարած աշխատանքների հաշվետվությունը և 2015թ.-ի համայնքային խնդիրների մասին:

Համայնքի ղեկավարը ողջունեց համայնքի բնակիչներին:
2014թ-ի կատարվել են մի շարք աշխատանքներ և լուծվել սոցիալական խնդիրներ:

1.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություն 590.0 հազ դրամի չափով:
2.Հարազատին կորցրած 19 ընտանիքներին հատկացվել է 570,0 հազ դրամի չափով օգնություն:
3 փողոցների լուսավորության համար նախատեսվել է 4090.8 հազար դրամ:
. 4:Մշակույթային միջոցառումների համար ծախսվել է 762.6 հազար դրամ;
5.Բնական գազի ներդրում 3272,8 հազար դրամ;
6.Մանկապարտեզի կոյուղագծի կառուցում և գազաֆիկացում 4690.0հազար դրամ;
7.Աղբահանություն 480,0 հազ. դրամ:

Բյուջեն կատարվել է 105 տոկոսի չափով:
Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Մ. Նազարյանը և Հ. Թառոյանը:
Համայնքի անդամ Գվիդոն Ավագյանը առաջարկեց մեծ ուշադրություն դարձնել ներհամայնքային ճանապարհների վերանորոգմանը, գյուղի չգազաֆիկացված

թաղամասերի գազաֆիկացմանը: Համայնքի բնակիչ՝ Մարատ Հովսեփյանը առաջարկեց նոր աշխատատեղերի ստեղծում,համայնքի երիտասարդությանը համայնքում պահելու համար:Համայնքի բնակիչ՝ Վաչիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:
Համայնքի բնակիչների բոլոր հարցերին տրվեց հստակ և սպառիչ պատասխաններ:

Ժողովը որոշեց

Տալ հավանություն համայնքի ղեկավարի 2014թ-ի կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին հաշվետվությանը:

Համայնքի ղեկավար՝ Գ. Ալոյան